274. «Սերմերի տնտեսական օգտակարության պետական փորձարկումների կազմակերպման, օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի ցանկում դրանց գրանցման և գրանցումից հանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	սերմերի տնտեսական օգտակարության պետական փորձարկումների կազմակերպման, օգտագործման թույլտվություն ունեցողների ցանկում դրանց գրանցման և գրանցումից հանման աշխատանքների կանոնակարգում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	«Սերմերի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 3-ամսյա ժամկետում	
275. «Պարտադիր հավաստագրման ենթակա բույսերի տեսակների ցանկը հաստատելու և հավաստագրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	պարտադիր հավաստագրման ենթակա բույսերի տեսակների ցանկի հաստատում և հավաստագրման կարգի սահմանում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	«Սերմերի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 3-ամսյա ժամկետում	
276. «Սերմեր արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանի վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	սերմեր արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գործընթացի կանոնակարգում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	«Սերմերի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 3-ամսյա ժամկետում	

1	2	3	4	5
277.«Տոհմանյութի հավաստագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	տոհմանյութի հավաստագրման գործընթացի կանոնակարգում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	«Տոհմային անասնաբուծության մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 3-ամսյա ժամկետում	
278.«Տոհմանյութի արտադրության և օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	տոհմանյութի արտադրության և օգտագործման կարգի սահմանում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	«Տոհմային անասնաբուծության մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 3-ամսյա ժամկետում	
279.«Տոհմանյութի ներկրման և արտահանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	տոհմանյութի ներկրման և արտահանման գործընթացի կանոնակարգում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	«Տոհմային անասնաբուծության մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 3-ամսյա ժամկետում	
280.«Տոհմային կենդանիների բոնիտավորման, ինչպես նաև նրանց՝ ըստ սերնդի որակի գնահատման պայմանները և կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	տոհմային կենդանիների բոնիտավորման կարգի սահմանում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	«Տոհմային անասնաբուծության մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 3-ամսյա ժամկետում	
281.«Սերմերի հավաստագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	սերմերի հավաստագրման գործընթացի կանոնակարգում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	«Սերմերի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում	
282.«Ազրարային պետական տեսչությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Անասնաբուծության մասին», «Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման մասին» և «Երկրագործության կանոնների մասին» ՀՀ նոր օրենքների պահանջներին համապատասխանեցում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	նշված ՀՀ օրենքներն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում	

1	2	3	4	5
<p>283.«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակը համայնքների գլխավոր հատակագծերի մշակմանը ներկայացվող պահանջների կատարելագործումն ու օպտիմալացումն է և այն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններից բխող նոր պահանջներին համապատասխանեցումը:</p>	<p>ՀՀ քաղաքաշինության նախարարություն</p>	<p>«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 3-ամսյա ժամկետում</p>	
<p>284.Մասնավորեցման գործընթացի մասին եռամսյակային հաշվետվությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ կառավարությանը մասնավորեցման մասին ամփոփ տեղեկատվության տրամադրում, մասնավորեցման գործարքների վերաբերյալ հանրությանն իրազեկում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն</p>	<p>2005 թ. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը</p>	
<p>285.«Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքներին փոխանցելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծըը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի կիրարկման ապահովում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</p>	<p>2005 թ., պարբերաբար</p>	
<p>286.«Համայնքների վարչական սահմանների նկարագրության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ըստ մարզերի) ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի կիրարկման ապահովում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</p>	<p>2005 թ., պարբերաբար</p>	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ
 ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը
1	2	3
1. ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն	1.1. ՀՀ Սյունիքի մարզի բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի հիմնում	ՀՀ Սյունիքի մարզի կենտրոնացված ազդարարման համակարգի ստեղծում և վերականգնում
	1.2. ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի հիմնում	ՀՀ Գեղարքունիքի մարզի կենտրոնացված ազդարարման համակարգի ստեղծում և վերականգնում
	1.3. ՀՀ Տավուշի մարզի բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի հիմնում	ՀՀ Տավուշի մարզի կենտրոնացված ազդարարման համակարգի ստեղծում և վերականգնում
2. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	2.1. Հարկային ապառքների կրճատում	հարկային ապառքների անհուսալի ճանաչման և դուրսգրման օրենսդրության աստիճանական կատարում: Հարկային ապառքների հարկադիր գանձման մեխանիզմների կիրառում` բացառելով ընթացիկ ապառքների առաջացումը, հարկային ապառքների զանձելիության մակարդակի բարձրացումը
	2.2. Հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների (գերավճարների) նվազեցում	արտահանող կազմակերպությունների` ավելացված արժեքի հարկի գծով գերավճարների վերադարձի գործընթացի բարելավում, դրանց նկատմամբ, ինչպես նաև հարկային հաշվանցումների հսկողական աշխատանքների մակարդակի բարձրացում
	2.3. Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գանձման աշխատանքների բարելավում	ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությանը փոխանցված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գանձման գործառույթների իրականացում, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հավաքագրման մակարդակի բարելավում
	2.4. Խոշոր հարկ վճարողների հարկային հսկողության արդյունավետության բարձրացում	խոշոր հարկ վճարողների` պարզեցված հարկով հարկման հնարավորության սահմանափակում` իրացման շրջանառությունների իրական ծավալների բացահայտում, վճարվող հարկերի չափի և զանձելիության բարձրացում

1	2	3
<p>3. ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտե</p>	<p>3.1. Երևանի «Ջրնուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից օգտագործվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ մասնավոր հատվածին փոխանցելու գործընթացների կազմակերպում</p>	<p>մինչև Երևանի «Ջրնուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից օգտագործվող ջրային համակարգերը և այլ գույքը մրցույթով վարձակալությամբ մասնավոր հատվածին հանձնելու ընկերության կառուցվածքային վերակազմակերպման, ֆինանսական առողջացման, գույքի սեփականության վկայականների ձեռքբերման, ինչպես նաև վարձակալության գործընթացների հետ կապված այլ միջոցառումների իրականացումը: Երևանի «Ջրնուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից օգտագործվող գույքը վարձակալին փոխանցելու համար ՀՀ կառավարության 2004 թ. սեպտեմբերի 23-ի N 1361-Ա որոշմամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարի գլխավորությամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որի հիմնական խնդիրն է Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերը մասնավոր հատվածին մրցույթով վարձակալությամբ փոխանցելու գործընթացի՝ առավել արդյունավետ և նախատեսված ժամկետներում կազմակերպումը</p>
	<p>3.2. ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության շրջանակներում KFW բանկի կողմից ֆինանսավորվող «Լոռու (Վանաձոր) և Շիրակի (Գյումրի) մարզերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում» ներդրումային ծրագրի իրականացման ապահովում</p>	<p>Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության վարկային միջոցների հաշվին՝ երկրաշարժից տուժած ՀՀ տարածաշրջանների ջրամատակարարման և ջրահեռացման հետագա բարելավումն իրականացվելու է գործող համակարգերի վերականգնման, ջրամատակարար ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման, նշված տարածաշրջանների սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, ինչպես նաև ջրամատակարար ընկերությունների կողմից սպասարկվող համակարգերի հետագա զարգացման միջոցով</p>
	<p>3.3. Հայաստանի Հանրապետությունում ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների կայացման և հետագա զարգացման ապահովում, ջրօգտագործողների ընկերությունների միությունների ստեղծում</p>	<p>«Ոռոգման համակարգերի զարգացում» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված 54 ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) կառավարող մարմինների ուսուցում՝ համակարգերի շահագործման, ջրամատակարարման, հաշվառման, ֆինանսատնտեսական խնդիրների վերաբերյալ: ՋՕԸ-ների կողմից սպասարկվող ներտնտեսային ցանցերի վերականգնման աշխատանքներ, ինչպես նաև ընկերություններին մեքենամեխանիզմներով և սարքավորումներով համալրում: Ջրօգտագործողների ընկերությունների կողմից ջրօգտագործողների ընկերությունների միությունների ստեղծման աշխատանքների կազմակերպում և աջակցություն</p>

1	2	3
4. ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե	4.1. Մաքսային մարմիններում մալուխային և արքանյակային կապի ներդրման արդյունքում ստացվելիք տեխնիկական նոր հնարավորություններին համապատասխան գործող օրենսդրական դաշտի լրամշակում	հաշվի առնելով տեխնիկական նոր հնարավորությունները՝ մաքսային օրենսդրության մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասին նախագծերի մշակում
	4.2. Մաքսային միջնորդական գործունեություն իրականացնող անձանց, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեության առանձին մասնակիցների համար կիրառվող ինքնահայտարարագրման գործընթացի կարգավորում	համապատասխան գերատեսչական իրավական ակտի ընդունում
	4.3. Մաքսային հսկողության ու ձևակերպումների շղթայի արմատական բարելավում՝ համապատասխան տեխնիկական հագեցվածությամբ մաքսային զննման և հաշվառման վայրեր ստեղծելու միջոցով (2005-2006 թթ., շարունակական)	արտաքին ֆինանսավորման աղբյուրների ներգրավման աշխատանքների իրականացում
5. ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն	5.1. ՀՀ քաղաքացիների արտագնա աշխատանքային գործունեության կանոնակարգում	համապատասխան օրենքի ընդունում
	5.2. Անլեգալ միգրացիայի և թրաֆիկինգի դեմ պայքարին ուղղված կանխարգելիչ միջոցառումների մշակում և իրականացում	ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագծի մշակում
6. ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	6.1. Հայաստանի Հանրապետության օդային տարածքում օդանավերի ուղղաձիգ տարանջատման կրճատված մինիմումների ներդրում	2005 թվականի մարտի 17-ը տարածաշրջանում սահմանվել է որպես օդային տարածքում օդանավերի ուղղաձիգ տարանջատման կրճատված մինիմումների (RVSM) ներդրման նոր ժամկետ: 2005 թվականի հունվարի 26-28-ը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) փարիզյան բյուրոյում կայանալիք խորհրդակցության ժամանակ նախատեսվում է Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի մասնակցությամբ ստորագրել RVSM ներդրման կապակցությամբ համագործակցության համաձայնագրեր:
	6.2. «Եվրակոնտրոլ» կազմակերպության անդամակցում	«Եվրակոնտրոլ» կազմակերպությանն անդամակցության հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջ փաթեթը և դրանց հայերեն թարգմանությունները 2004 թվականին ներկայացվել էին ՀՀ արտաքին գործերի նախարարություն: Սույն թվականի դեկտեմբերի 10-ին ստորագրվել է անդամակցության հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը: «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն անդամակցության գործընթացն ավարտելու համար 2005 թ. ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից պետք է համակարգվի և սկսվի ՀՀ Ազգային ժողովի կողմից ստորագրված փաստաթղթերի վավերացման գործընթացը:
	6.3. ՀՀ քաղաքացիական ավիացիայի ոլորտը ՀՀ օրենսդրությանը ներդաշնակ կանոնակարգելու նպատակով «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի՝ նոր խմբագրությամբ ընդունում	«Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի՝ նոր խմբագրությամբ նախագծի լրամշակում և ընդունում ՀՀ Ազգային ժողովի կողմից

1	2	3
7. ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	7.1. ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում 2005 թ. ընթացքում մեկ միասնական տեղեկատվական-տեխնիկական համակարգի ներդրում	համակարգչային տեխնիկայի ձեռքբերում, տեղերում լրացուցիչ հեռախոսահամարների տեղադրում, ծրագրային ապահովման խնդրի լուծում, մասնագետների նախապատրաստում
	7.2. ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում անձնագրերի կենտրոնացված տպագրություն	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կազմում անձնագրերի տպագրության բաժանմունքի ստեղծում, ժամանակակից տեխնիկական միջոցների ներդրում
8. ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե	8.1. 2006 թ. փետրվարի 10-26-ը թուրինի (Իտալիա) 20-րդ ձմեռային օլիմպիական խաղերին ՀՀ մարզական պատվիրակության նախապատրաստության և մասնակցության ծրագրի իրականացում	միջազգային և վարկանիշային մրցումների մասնակցության, ուսումնամարզական հավաքների, նյութատեխնիկական բազայի, համապատասխան մարզագույքի և համագետտի ապահովում: Մարզիկների վարպետության բարձրացում, վարկանիշի ձեռքբերում, անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրում
	8.2. 2005-2008 թթ. ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցների մարզակառույցների հիմնանորոգման աշխատանքների իրականացում	մարզադպրոցների նյութատեխնիկական բազայի ամրապնդում, ավտոնոմ ջեռուցման համակարգերի ներդրում, մարզումների համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, այդ պատանների իրականացմանն ուղղվող ֆինանսական միջոցների աստիճանական ավելացում
9. ՀՀ արդարադատության նախարարություն	9.1. Օրենքների և այլ իրավական ակտերի միջև եղած հակասությունների, կոռուպցիային նպաստող սողանցքների վերացում	օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն ռիսկերի նպատակով փորձաքննությունների իրականացում օրենքների և այլ իրավական ակտերում հակակոռուպցիոն ռիսկերի բացահայտման նպատակով վերլուծությունների իրականացում
	9.2. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական և կադրային պատշաճ մակարդակի ու նրա ծառայությունների մատչելիության ապահովում	վարկային միջոցների տրամադրում՝ «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական բազայի ամրապնդման ծրագրի իրականացման համար փորձագետների աշխատավարձի բարձրացում փորձագետի պաշտոնում նշանակման և փորձագետների ատեստավորման մեխանիզմների կատարելագործում «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի ծառայությունների մատչելիության ուսումնասիրություն և դրա բարձրացմանն ուղղված միջոցների ձեռնարկում
	9.3. Դատավճիռների և դատարանի վճիռների կատարման նկատմամբ վստահության աճ և դրա հետ կապված տնտեսական հարաբերությունների, մասնավորապես, բանկային վարկի ընդլայնման խոչընդոտների նվազեցում	դատավճիռների և դատարանի վճիռների հարկադիր կատարման արդյունավետության բարձրացում հարկադիր կատարման գործողությունների թափանցիկության ապահովում
	9.4. Կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ հանրության շրջանում օրենսդրական ակտերի և նախագծերի մատչելիության բարձրացում, այդ նախագծերի, ինչպես նաև այլ նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ստացման առումով հետադարձ կապի ապահովում	օրենսդրական ակտերի և դրանց նախագծերի էլեկտրոնային կայքի ստեղծում օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ և այլ առաջարկությունների ստացման նպատակով էլեկտրոնային կայքի միջոցով հետադարձ կապի ապահովում

1	2	3
10. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	10.1. Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման համար անհրաժեշտ օրենսդրական հենքի ստեղծում	«Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի, դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակում և ընդունում
	10.2. Տնտեսությունում տեխնիկական անվտանգության ապահովման համակարգի օրենսդրական հենքի ստեղծում	«Տնտեսությունում տեխնիկական անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի, ինչպես նաև դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի (տեխնիկական կանոնակարգերի) մշակում և ընդունում
	10.3. Երկրի ռիսկայնության մակարդակի նվազեցում՝ ըստ ՏՀՀԿ-ի (OECD) ընդունած գնահատման չափանիշների	Երկրի ներդրումային վարկանիշի բարձրացմանը, ներդրումային և ֆինանսական ներհոսքի մեծացման ապահովման միջոցառումների իրականացում
11. ՀՀ էներգետիկայի նախարարություն	11.1. Հանրապետությունում գազամատակարարման արդիականացում և բնական գազի ներկրման ուղիների բազմազանացում	բնակչության գազամատակարարման վերականգնում և գազաֆիկացում Իրան -Հայաստան գազամուղի կառուցման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացում Իրան -Հայաստան գազամուղի երկրորդ փուլի ֆինանսավորման համար անհրաժեշտ աշխատանքների կազմակերպում
	11.2. Արաքս գետի հիդրոպոտենցիալի օգտագործում	Մեղրու ՀԷԿ-ի կառուցման ֆինանսավորման սխեմայի կազմակերպում
	11.3. Սեփական վերականգնվող էներգառեսուրսների առաջընթաց յուրացման խթանում	փոքր ՀԷԿ-երի արդիականացման և կառուցման նպատակով գերմանական KfW բանկի կողմից վերականգնվող հիմնադրամի կիրառման գործընթացի մեկնարկում ՀԲ, ՎՋԵԲ, ԱՄՆ ՄՁԳ և այլ դոնորների կողմից վերականգնվող էներգետիկայի հիմնադրամի ձևավորման աշխատանքների իրականացում Շնոդ և Լոռի բերդ ՀԷԿ-երի կառուցման նպատակով հնարավոր ներդրողների ներգրավման աշխատանքների կազմակերպում Պուշկինի լեռնանցքում 2.6 մՎտ հզորությամբ հողմաէլեկտրակայանի կառուցման (թողարկման) հետ կապված աշխատանքների իրականացում Սիսիանի տարածքում երկրաջերմային էներգիայի օգտագործման հնարավորությունների ուսումնասիրման շարունակում և հորատման աշխատանքների կազմակերպում
	11.4. Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև նոր երկշղթա էլեկտրահաղորդման գծի կառուցում	էլեկտրահաղորդման գծի երրորդ հերթի նախագծի մշակում և կառուցման ֆինանսական սխեմայի կազմակերպում

1	2	3
12. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	12.1. Ապահովագրական ոլորտի կարգավորման համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի շարունակական զարգացում և ներդրում	«Ապահովագրության մասին» ՀՀ օրենքից բխող կանոնակարգերի մշակում և ընդունում
	12.2. Ապահովագրական ոլորտի կարգավորումն ու վերահսկողությունն իրականացնող մարմնի հզորացման ու անկախացման միջոցառումների ապահովում	աղքատության հաղթահարման աջակցության ծրագրով 2006 թվականին նախատեսված անկախ տեսչության ստեղծման համար համապատասխան քայլերի իրականացում
	12.3. ՀՀ պետական բյուջեի կատարման արդյունքում գոյացող գերաժախսերի առաջացման պատճառների և դրանց վերացմանը (նվազեցմանը) ուղղված խնդիրների լուծում	ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագծի մշակում
	12.4. Պետական կառավարման համակարգում վերահսկողություն իրականացնող մարմինների գործառույթների հստակեցում և կանոնակարգում, տարանջատում և կրկնությունների բացառում	«Վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում
	12.5. ԱՄՀ-ի, ինչպես նաև ՀԲ-ի հետ նոր ծրագրերի շուրջ բանակցությունների վարում և այդ ոլորտում առաջընթացի ապահովում	ԱՄՀ-ի և ՀԲ-ի հետ համագործակցության շրջանակներում նոր ծրագրերի շուրջ բանակցային գործընթացների իրականացում, շահագրգիռ մարմինների հետ քննարկումների կազմակերպում
	12.6. ՀՀ հարկային համակարգի մասնակառուցման միասնական սկզբունքների ապահովման նպատակով ՀՀ հարկային օրենսգրքի մշակում	ՀՀ հարկային օրենսգրքի նախագծի ընդհանուր մասի մշակում, հատուկ և անցումային մասի մշակում, շահագրգիռ մարմինների հետ դրանց քննարկում և քննարկման արդյունքների հիման վրա լրամշակում
	12.7. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացում	ԱՀՌԾ-ի իրականացման կառուցվածքի սահմանում՝ ԱՀՌԾ-ի իրականացման գործընթացը համակարգող խորհրդի և ԱՀՌԾ-ի իրականացման ընթացիկ աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի ձևավորում, ԱՀՌԾ-ի իրականացման մոնիտորինգի համակարգի ձևավորում և զարգացում

1	2	3
13. ՀՀ կրթության և գիտության նախարարություն	13.1. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացում	<p>Նախնական և միջին մասնագիտական կրթական հաստատությունների համակարգի ձևավորում</p> <p>Նախնական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի արդիականացում</p> <p>Նախնական և միջին մասնագիտական կրթության միասնական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում</p>
	13.2. Ուսուցման նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ու նոր մեթոդների ներդրում	<p>Ժամանակակից տեսահաղորդակցական տեխնիկական միջոցների ձեռքբերում ուսուցման նոր տեխնոլոգիաների ու մեթոդների մշակում և փորձարկում</p> <p>Նոր տեխնոլոգիաների կիրառում ուսուցման գործընթացում</p>
	13.3. Ուսուցիչների նպատակային համալիր վերապատրաստում	<p>մարզային վերապատրաստման կենտրոնների (ԿԱԻ-ի մասնաճյուղերի) ուսումնական տարածքների վերանորոգում և կահավորում</p> <p>մարզային վերապատրաստման կենտրոնների ապահովում ժամանակակից տեխնիկական և ուսումնաօժանդակ միջոցներով</p> <p>ուսուցիչների վերապատրաստման դասընթացի I փուլի իրականացում</p>
	13.4. Գիտելիքների գնահատման համակարգի արդիականացում	<p>գնահատման և թեստավորման կենտրոնի գործարկում</p> <p>նոր ուսումնական ծրագրերի հիման վրա թեստերի մշակում և փորձարկում</p>
	13.5. Նախադպրոցական կրթության որակի և մատչելիության բարձրացում	<p>Նախադպրոցական համալիր կրթադաստիարակչական ծրագրի մշակում և փորձարկում</p> <p>Նախակրթարանների ծրագրերի, ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերի մշակում և փորձարկում</p> <p>տարաբնույթ նախադպրոցական կրթական ծառայություններ մատուցող նախակրթարանների փորձնական ծրագրերի իրականացում</p>
	13.6. Կրթության և գիտության ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործում	<p>«ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասին» և «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքների ընդունում</p> <p>«Հանրակրթության մասին», «Արտադպրոցական կրթության մասին» ու «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակում</p> <p>Կրթության մասին օրենսգրքի նախագծի մշակման նպատակով աշխատանքային խմբի ստեղծում</p>
	13.7. «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքից բխող համակարգի բարեփոխումների իրականացում	<p>բարձրագույն ուսումնական հաստատությունների արդիականացման քաղաքականության և ժամանակացույցի մշակում</p> <p>օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակում և ներկայացում</p>

1	2	3
<p>14. ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	<p>14.1. Մշակույթի ոլորտում կադրերի համալրում, այդ թվում՝ կադրերի պատրաստում, վերապատրաստում, վերաորակավորման համակարգի ստեղծում</p>	<p>մշակույթի ոլորտի աշխատողների վերապատրաստման ու վերաորակավորման պայմանների ստեղծում և կանոնակարգում, մշակույթի ոլորտի կադրային պահանջարկի ճշտում և կադրերի հաշվառում կադրերի պատրաստման և վերապատրաստման համար ուսումնական հաստատությունների ընտրություն</p> <p>վերապատրաստման և վերաորակավորման ժամանակացույցների կազմում, անցկացում և համապատասխան վկայագրերի հանձնում</p>
	<p>14.2. Մշակութային կյանքի աշխուժացում մարզերում, տարածքային մշակութային համագործակցության ընդլայնում և համատեղ համալիր ծրագրերի իրականացում</p>	<p>ՀՀ մարզպետարանների հետ համատեղ մշակույթի զարգացման ծրագրի մշակում թատերահաներգային հյուրախաղերի, ցուցահանդեսների, փառատոների կազմակերպում</p>
	<p>14.3. Հուշարձանի վերականգնման, ամրակայման և բարեկարգման նախագծա-նախահաշվային և շինարարական աշխատանքների կատարման գործընթացն ապահովող նորմատիվային փաստաթղթերի պատրաստում</p>	<p>փաստաթղթերի փաթեթի մշակում, քննարկում, հաստատում և դրանք ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացնելը, գերատեսչական նորմատիվային ակտ՝ գրանցելու համար</p>
	<p>14.4. Միջազգային կազմակերպություններին ինտեգրվելու և մշակութային քաղաքականությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու գործընթացի իրականացում</p>	<p>մշակութային քաղաքականության ձևավորման և իրականացման եվրոպական չափանիշների ուսումնասիրում և ՀՀ մշակութային քաղաքականության իրականացման համար օրենսդրական դաշտի համապատասխանեցման գործընթացի կարգավորում եվրոպական համապատասխան կառույցներին ինտեգրում</p>
	<p>14.5. ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության 2005-2007 թվականների ռազմավարության մշակում</p>	<p>2004 թվականի ընթացքում ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունն սկսել է ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության 2005-2007 թթ. ռազմավարության մշակման աշխատանքները, որի նախնական տարբերակը քննարկվել է եվրախորհրդից Հայաստան հրավիրված փորձագետների հետ:</p> <p>Ռազմավարության վերջնական տարբերակը ՀՀ կառավարություն կներկայացվի 2005 թվականի առաջին եռամսյակում:</p>
	<p>14.6. ՀՀ երիտասարդության ազգային զեկույցի պատրաստում</p>	<p>2005 թվականի ընթացքում ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը կստեղծի աշխատանքային խումբ, որը կմշակի ՀՀ երիտասարդության ազգային զեկույցը:</p>
	<p>14.7. Մշակույթի քաղաքականության ազգային զեկույցի պատրաստում և քննարկում</p>	<p>ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը կստեղծի աշխատանքային խումբ, որը կմշակի ՀՀ երիտասարդության ազգային զեկույցը:</p>

1	2	3
	14.8. Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության համար անհրաժեշտ իրավական, կազմակերպական և տնտեսական պայմանների ստեղծում	օրենսդրական դաշտի կարգավորման նպատակով փաստաթղթերի փաթեթի մշակում, քննարկում, համապատասխան իրավական ակտերի ընդունում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունն իրականացնող մարմնի ստեղծման անհրաժեշտության հարցի քննարկումներ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ցուցակների ստեղծման նախապատրաստական աշխատանքներ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության նպատակային ծրագրերի մշակում գիտական սեմինարների, խորհրդակցությունների, գիտաժողովների կազմակերպում մշակութային, կրթական ծրագրերի միջոցով հասարակությանն իրազեկում և տեղեկատվայնացում
15. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	15.1. Հայաստանի Հանրապետությունում սոցիալական ապահովության քարտերի համակարգի ներդրում և կիրառում	սոցիալական ապահովության քարտերի համարների հավաստիությունը ճշտելու նպատակով տեղեկատվության փոխանակման ինքնաշխատ համակարգերի նախագծում և ներդրում սոցիալական ապահովության ոլորտում կիրառվող` պետական կառավարման այլ մարմիններից տեղեկատվության ստացման ինքնաշխատ համակարգերի նախագծում և ներդրում
	15.2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մոնիտորինգի հանրապետական, մարզային և տարածքային միասնական համակարգի ներդրում, ձևավորում և շահագործում	մոնիտորինգի եռամսյակային` հանրապետական, մարզային և տարածքային համակարգի ներդրում, զբաղվածության տարածքային կենտրոնների, սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների, աշխատանքի պետական տեսչության տարածքային մարմինների աշխատողների վերապատրաստում, այն հաշվով, որպեսզի մոնիտորինգի և վերլուծության արդյունքներով հնարավոր լինի ունենալ եռամսյակային, կիսամյակային, տարեկան կտրվածքներով հավաստի տվյալներ տնտեսապես ակտիվ բնակչության, նրա կառուցվածքի և բաշխման, զբաղվածության և գործազրկության մակարդակի միջին ամսական աշխատավարձի, աշխատանքի վարձատրության կառուցվածքի բաշխման(ըստ ճյուղերի և տարածաշրջանների), աշխատաժամանակի միջին տևողության, աշխատուժի արժեքի, սպառողական ապրանքների գների ինդեքսների, տնային տնտեսությունների վարման ծախսերի, արտադրությունում ստացած վնասվածքների և դժբախտ դեպքերի, աշխատանքային վեճերի մասին
	15.3. Կենսաթոշակային ապահովվագրության համակարգում անհատական (անձնավորված) հաշվառման ներդրում և կիրառում	<p>համակարգի ներդրումն ապահովող Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման մշակում և ներկայացում</p> <p>անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների միասնական բազայի ստեղծում</p> <p>համապատասխան տեղեկատվության փոխանակման համակարգի ներդրում</p>

1	2	3
16. ՀՀ առողջապահության նախարարություն	16.1. Ինունականխարգելման գործընթացի արդյունավետության բարձրացում	Ինունականխարգելման ազգային ծրագրի մշակում և հաստատում Ինունականխարգելման ազգային ծրագրի շրջանակներում միջոցառումների ցանկի հաստատում և գործընթացի արդյունավետության բարձրացում պատվաստանյութերի ձեռքբերման գործընթացում պետական մասնակցության ծավալների աստիճանական աճ, որոնք արտացոլված են միջնաժամկետ ծախսերի ծրագրում
	16.2. Հանրային առողջության և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ոլորտում ծագող հարաբերությունների պատշաճ իրավական կարգավորում և ՀՀ բնակչության հանրային առողջության պահպանման և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման հետագա կատարելագործում	«ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը

1	2	3
<p>17. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>17.1. Պետական անասնաբուժական և բույսերի կարանտին հսկողության համակարգի գործունեության պայմանների հստակեցում և դրանց արդյունավետության բարձրացում</p>	<p>Հայաստանի Հանրապետությունում պետական անասնաբուժական հսկողության կարգի հաստատման և կիրառման միջոցով պետական անասնաբուժական հսկողության գործընթացի հստակեցում</p> <p>պետական անասնաբուժական հսկման ենթակա բեռների անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերը տալու կարգը հաստատելու և կիրառելու միջոցով կենդանական ծագման մթերքների ներկրման և արտահանման գործընթացի կանոնակարգում</p> <p>անասնաբուժական կարանտինի սահմանման կարգը հաստատելու միջոցով անասնաբուժական կարանտինի կազմակերպման գործընթացի հստակեցում</p> <p>բույսերի կարանտինի սահմանման կարգը հաստատելու միջոցով բույսերի կարանտինի կազմակերպման գործընթացի կանոնակարգում</p>
	<p>17.2. Գյուղատնտեսական կենդանիների համաճարակային հիվանդությունների կանխարգելման համակարգի կատարելագործում, կենդանական ծագման պարենահումքի անվտանգության անասնաբուժական հսկողության մեխանիզմների հստակեցում</p>	<p>անասնաբուժության մեջ օգտագործվող դեղամիջոցների Հայաստանի Հանրապետություն ներմուծման և Հայաստանի Հանրապետությունից արտահանման ձևակերպման կարգը հաստատելու միջոցով դեղամիջոցների ներկրման և արտահանման գործընթացի կանոնակարգում</p> <p>կենդանական ծագում ունեցող պարենային հումքի և սննդամթերքի անվտանգության պետական անասնաբուժական վերահսկողության անցկացման կարգը հաստատելու և կիրառելու միջոցով այդ գործընթացի կանոնակարգում</p> <p>կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի, ձկան և ջրային կենդանիների փորձաքննության կարգերի ընդունման միջոցով այդ բնագավառում փորձաքննության գործընթացի հստակեցում</p> <p>վճարովի անասնաբուժական ծառայությունների մատուցման կարգը հաստատելու և կիրառելու միջոցով վճարովի անասնաբուժական ծառայության գործընթացի կանոնակարգում</p> <p>հանրապետության սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը հաստատելու և կիրառելու միջոցով գյուղատնտեսական կենդանիների սպանդի գործընթացի բարելավում</p>
	<p>17.3. Բույսերի պաշտպանության բնագավառի և բույսերի պաշտպանության միջոցների իրացման և օգտագործման գործընթացի կանոնակարգում</p>	<p>բույսերի պաշտպանության քիմիական միջոցների իրացման կարգը հաստատելու և կիրառելու միջոցով այդ գործընթացի կանոնակարգում</p>
	<p>17.4. Սերմնարտադրության համակարգի օրենսդրական հիմքերի հստակեցում, «Սերմերի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող իրավական հիմքերի ձևավորում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն սերմերի ներմուծման և Հայաստանի Հանրապետությունից սերմերի արտահանման կարգը հաստատելու և կիրառելու միջոցով այդ բնագավառի հարաբերությունների հստակեցում</p> <p>սերմերի խմբաքանակից նմուշառման կարգը և ակտի ձևը սահմանելու միջոցով սերմերի նմուշառման գործընթացի կանոնակարգում</p> <p>սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողի (ապրոբատորի) հավատարմագրման կարգը և սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների հայտի ձևը հաստատելու և ներդնելու միջոցով դաշտային հետազոտությունների գործընթացի բարելավում</p> <p>տնտեսական օգտակարության պետական փորձարկումների կազմակերպման, օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի ցանկում դրանց գրանցման և գրանցումից հանելու կարգը հաստատելու և կիրառելու միջոցով սերմերի</p>

1	2	3
18. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	18.1. Ավտոմոբիլային տրանսպորտի գործունեության կարգավորմանը և բարեփոխմանը վերաբերող օրենսդրական դաշտի ստեղծում	ՀՀ համապատասխան օրենքների և ՀՀ կառավարության որոշումների նախագծերի մշակում
19. ՀՀ քաղաքաշինության նախարարություն	19.1. Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման համակարգի ստեղծում՝ «Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման վերաբերյալ ուսումնասիրություն» ծրագրի իրականացում (ճապոնիայի կառավարության կողմից հատկացված դրամաշնորհով) 19.2. ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակում	«Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման վերաբերյալ ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում համագործակցություն ճապոնիայի ուսումնասիրող խմբի հետ, ՀՀ կառավարության 2004 թ. մարտի 18-ի N 348-Ն որոշման հավելվածի VII բաժնի 3-րդ և 4-րդ կետերի պահանջների կատարում ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման աշխատանքների իրականացում
20. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	20.1. Պետական և համայնքների գույքի տարանջատում, սեփականության իրավունքների գրանցում 20.2. Ծրագրային, այդ թվում՝ սոցիալական և ներդրումային մասնավորեցման առաջնայնության ապահովում	պետական և համայնքի սեփականություն հանդիսացող գույքի հաշվառման և օտարման հարաբերությունների կանոնակարգում, գույքի օտարման իրականացման հրապարակայնության և թափանցիկության ապահովում մասնավորեցման ժամանակ ներդրումների ներգրավմամբ և գործարար ծրագրերի առկայությամբ մասնավորեցման հայտերի նախապատվության ապահովում և ներդրումային ու սոցիալական երաշխիքների կարևորում
21. ՀՀ բնապահպանության նախարարություն	21.1. Սևանա լճի «Իշխան» ձկան և դրա տարատեսակների վերաճի ապահովում 21.2. Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ կապված՝ լճի շրջակա տարածքների գույքագրում և հաշվառում	Սևանա լճի «Իշխան» ձկան և դրա տարատեսակների քանակական հաշվառում Սևանա լճում և լիճ թափվող գետերում Սևանա լճում «Իշխան» ձկան վերարտադրության՝ մայրական կազմի ապահովում «Իշխան» մանրածկան աճեցում և բաց թողում դեպի լիճ Սևանա լճի շրջակա տարածքների անտառների (ծառերի ու թփերի) հաշվառում, գույքագրում և քարտեզագրում Սևանա լճի շրջակա տարածքների անշարժ օբյեկտների հաշվառում, գույքագրում և քարտեզագրում Սևանա լճի շրջակա տարածքներում անտառապատման ենթակա նոր տարածքների հիմնման վերաբերյալ առաջարկությունների մշակում Արգելոցային, ռեկրեացիոն և տնտեսական գոտիների սահմանների վերանայում

1	2	3
22. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	22.1. Համայնքների վարչական սահմանների նկարագրություն	Ուսումնասիրության փաստաթղթերի քննարկում կառավարական հանձնաժողովում և սահմանային վիճելի հարցերի կարգավորման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի նախապատրաստում սահմանների նկարագրության և քարտեզագրական նյութերը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը (ըստ մարզերի կամ տարածաշրջանների)
	22.2. Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքների կադաստրային քարտեզագրման աշխատանքների ավարտում (բացառությամբ բնության հատուկ պահպանվող տարածքների)	պլանաբարձունքային հիմքի ստեղծում հանութագրման աշխատանքների իրականացում թվայնացման աշխատանքների իրականացում կադաստրային քարտեզների ստեղծում
	22.3. Հայաստանի ազգային ատլասի հայերեն տարբերակի ստեղծման աշխատանքների ավարտում և հրատարակում	հեղինակային, խմբագրական, կազմողական և ձևավորման աշխատանքների ավարտ գումարաժամում և 1000 օրինակի տպագրություն
	22.4. Իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքների ավարտում	սեփականության իրավունքի վկայականների նախապատրաստում վկայականների տրամադրում քաղաքացիներին
	22.5. Գրանցման ավտոմատացված համակարգի ներդրում	կադաստրային քարտեզների ծածկագրում շենքերի, շինությունների թվային պլան-հատակագծերի ստեղծում անշարժ գույքի քանակական և որակական տվյալների մուտքագրում կադրերի վերապատրաստում և ուսուցում

1	2	3
<p>23. ՀՀ արտաքին գործերի նախարարություն</p>	<p>23.1. Հայաստանի արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչի հզորացում</p> <p>23.2. Եվրոպական ինտեգրացման գործընթացներում Հայաստանի հետագա ներգրավում</p>	<p>արտաքին քաղաքական նախաձեռնությունների իրականացում՝ նպատակաուղղված Հայաստանի տնտեսական անվտանգության, տնտեսական առաջընթացի, տնտեսական զարգացման աճի վերջին տարիների բարձր տեմպերի պահպանման համար բարենպաստ արտաքին պայմանների ապահովմանը, այդ թվում՝</p> <p>արտաքին աշխարհին կապող տրանսպորտային, էներգակիրների տեղափոխման երթուղիների անխափան գործարկմանը, դրանց տարբերազատմանը (դիվերսիֆիկացմանը),</p> <p>արտաքին առևտրի աշխարհագրական շրջանակների ընդլայնմանը, արտաքին ներդրումների խրախուսմանը</p> <p>Հայաստան-Եվրոպական միություն քաղաքական երկխոսության ծավալման աշխատանքների համադրում</p> <p>Հայաստան-Եվրոպական միության գործընկերության և համագործակցության համաձայնագրով (ԳՀՀ) նախատեսված ինտերնացիոնալ մարմինների աշխատանքների համադրում</p> <p>Եվրոպական միության տարածաշրջանային ծրագրերին Հայաստանի մասնակցության աշխատանքների համադրում</p> <p>Եվրոպական միության հետ եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներ անմիջական մասնակցություն Հայաստանի և Եվրոպական միության միջև ԳՀՀ-ի լիարժեք գործարկման ազգային ծրագրի մշակմանը, այդ ուղղությամբ Եվրոպական միության հետ անհրաժեշտ փոխգործակցության ապահովում</p> <p>արտաքին քաղաքական նախաձեռնությունների իրականացում՝ նպատակաուղղված՝ Եվրախորհրդի, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության, ՆԱՏՕ-ի եվրատլանտյան գործընկերության խորհրդի աշխատանքների և իրականացվող ծրագրերին Հայաստանի լիարժեք մասնակցությանը, Եվրախորհրդին, ԵԱՀԿ-ին և ՆԱՏՕ-ի ԵԱԳԽ-ին Հայաստանի մասնակցությամբ պայմանավորված պարտավորությունների կատարմանը, Եվրախորհրդի, ԵԱՀԿ-ի և ՆԱՏՕ-ի ԵԱԳԽ-ի կառույցներում Հայաստանի համար շահեկան դիրքորոշումների ձևավորմանը և որոշումների ընդունմանը</p>
<p>24. Գաղտնի</p>		